«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

**Մասնագիտությունը**

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

**Մոդուլի անվանումը՝**

«Տղամարդկանց մազերի կտրում»

**Արդյունք1Մազերի նախապատրաստում կտրման**

**Թեմա1.1Աշխատանքի նախապատրաստում**

Ժամանակակից կտրվածքները կատարվում են ինչպես թաց, այնպես էլ չոր մազերի հենքի վրա:
Չոր մազերով կտրվածք կատարելու համար մազերը լվանում են և թեթևակի չորացնում: Կտրվածքի ժամանակ մազերն անընդհատ սանրում են և հետևում, որ դրանք թափվեն իրենց բնական աճի ուղղու- թյամբ: Չոր մազերի վրա կտրվածք կատարելու ընթացքում անհրաժեշտ է հնարավորինս ուժեղ ձգել մազափունջը:Սովորաբար կտրվող մազերի երկարությունը և սանրվածքի հիմնական ուղղությունները որոշվում են թաց մազերի վրա: Հարկավոր է հետևողական լինել, որ բոլոր մազերը թրջվեն հավասարաչափ: Կտրվածքն իրականացնելիս հարկավոր է այս հանգամանքը հաշվի առնել, քանի որ թաց մազերը 0,5 սմ -1 սմ ավելի երկար են երևում, քան չոր մազերը: Հատկապես պետք է ուշադիր լինել գանգուր /ալիքաձև/ մազերի հետ աշխատելիս:
Մազերը կարելի է թրջել նաև հեղուկացրի միջոցով՝ ձեռքի ու սանրի օգնությամբ խոնավությունը տարածելով գլխի ողջ մակերեսով:Կարճ մազերը կտրելուց հետո հարկա- վոր է դրանք մեկ անգամ լվանալ՝կտրատված մազերը հեռացնելու նպատակով / սա պար- տադիր չէ երկար մազերի պարագայում/: Կտրելուց հետո հարկավոր է մազերը չորանել՝ ցույց տալով հաճախորդին, թե ինչպես կարելի է հարդարել տվյալ կտրվածքը:

**Հարցեր**

Ինչպիսի՞ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում կտրելու համար:--------
---
---

Ի՞նչ առանձնահատկություններ ունեն գանգուր մազերը:----------
---
---

**Թեմա1.2 Մազաբաժանման կատարում:**




*1. Վերևի ծոծրակային*

*2. Ներքևի ծոծրակային*

*3. Գագաթային*

*4. Քունքային*



***Հորիզոնական բաժուկն*** *անցնում է մի ականջից մյուսը մինչև ծոծրակի ուռու ցիկ մասերը:*



***Ո ւղղահայաց բաժուկն*** *սկսվում է ճակատի մեջտեղից և վերջանում ծոծրակի մեջտեղում:*



***Ս լաք-բաժուկն*** */«сагиттальный» լատ.՝ sagitta սլաք/ սկսվում է մի ականջից և հասնում է մինչև մյուս ականջը՝ անցնելով գլխի ամենաբարձր կետով: Այն բաժանում է գլուխը ճակատային-զագաթային և ծոծրակային հատվածների:*

*Գլխի ամենաբարձր կետը գտնվում է զագաթային հատվածում, որտեղ գլխին դրված սանրն ընդունում է հորիզոնական դիրք:*



***Կողմնային բաժուկն*** *առանձնացնում է գագաթային հատվածը քունքային հատվածից: Կողմնային բաժուկը ճակատային փոսիկից մինչև սլաք-բաժուկն ընկած հատվածն է:*

Այս բոլոր բաժուկների միջոցով ստանում են գագաթային, երկու ֆունֆային, վերևի և ներքևի
ծոծրակային հատվածներ:

**Հարցեր**

Ի՞նչ է հորիզոնական բաժուկը:----------

Ի՞նչ է ուղղահայաց բաժուկը:----------

Ի՞նչ է սլաֆ-բաժուկը:----------

Ի՞նչ է կողմնային բաժուկը:----------

**Աշխատանք2. Մազերի կտրում ՝ըստ հրահանգի**

**Թեմա2.1Մազերի կտրումը՝կտրման տարբեր մեթոդների և հնարքների կիրառմամբ**

Սանրվածքը կատարվում է « մազափունջը մազափնջի հետևից» մեթոդով՝ 90° անկյան տակ:Սկզբում անհրաժեշտ է հաճախորդի մազերը նախ թրջել, հետո՝ սանրել: Սակայն ավելի հարմար է դրանք լվանալ: Սովորաբար տղամարդկանց սրահներում մազերը լվանում են երկու անգամ՝ մինչև կտրվածքը և կտրվածքը վերջացնելուց հետո / բանի որ հիմնականում կատարվում են կարճ կտրվածքներ/:Մազերը բաժանում են հատվածների: Այս աշխատանքն
սկսում են ուղղահայաց բաժուկից, որն սկիզբ է առնում ճակատային փոսիկներից մինչև ծոծրակի եզրակտրման գիծը: Բաժուկները իրար պետք է զուգահեռ լինեն:
Երբ բացում են սագիտալ բաժուկը՝ առաջանում է վեց հատված՝ գագաթային, երկու ֆունֆային, միջին ծոծրակային և երկու կողմնային-ծոծրակային:Գագաթային հատվածում, ճակատային մա- զերի աճման եզրա ծից սկսած, առանձնացնում են մազափունջը և այն կտրում՝ 3-4 սմ բարձրության վրա՝ սկսած արմատներից: Դա սանրվածքի ստուգիչ մազափունջն է: Ամբողջ գագաթային հատվածի մազերը կտրվում են «մազափունջը մազափնջի հետևից» մեթոդով՝ ձգելով մազափունջը 90° անկյան տակ:Դրանից հետո սկսում են ֆունֆային հատվածի կտրումը: Այս հատվածի ստուգիչ մազափունջը դեմքի մոտ աճող եզրագծի մազափունջն է: Բաժուկները ուղղահայաց են:

Քունքային հատվածը կտրում են այնպես, ինչպես գագաթային հատվածը:Վարսավիրը պետք է կանգնած լինի հաճախորդի թիկունքում: Այսպես «մազափունջը մազափնջի հետևից» մեթոդով կտրվում են քունքային բոլոր մազերը մինչև սագիտալ բաժուկը:Ծոծրակային հատվածի մազերը կտրվում են՝ սկսած կենտրոնական հատվածից: Ստուգիչ մազափունջը գտնվում է սագիտալ բաժուկի վրա:Նույն ձևով կտրվում են ծոծրակի կողմնային հատվածները: Ծոծրակային հատվածի բոլոր մազերը սանրվում են դեպի ներքև: Կատարվում է ծոծրակային հատվածի եզրակտրում: Մազերը սանրելիս դրանք որքան հնարավոր է հարկավոր է կիպ սեղմել պարանոցին:

Եթե մազերը չորացել են, ապա դրանք պետք է նորից թրջել:Ծոծրակի եզրագծով կտրումը կարող է լինել ձվաձև, սեղանաձև՝ ուղիղ և կլոր եզրերով:Եզրակտրման գիծը չպետք է լինի մազերի բնական աճման գծից բարձր:

*Իջնում են դեպի քունքեր:*

*Կողմնային ծոծրակային հատվածները կտրում են ինչպես մեջտեղի հատվածը՝«մազափունջը մազափնջի հետևից»:*



*Ծոծրակի ողիղ եզրակտրում:*



*Ճակատի մազափունջը կտրվում է ուղիղ կտրվածքով՝թեթևակի կլորացնելով ճակատային փոսիկների ուղղությամբ:*

**Տղամարդկանց սանրվածք՝ մազխուզիչի կիրառմամբ**

**Մազի տեսակը՝** կարճ, խիտ:

**Անհրաժեշտ գործիքներ՝** մեքենա, ֆիլիրովային մկրատ:

Այս կտրվածքը կատարում են չորմազերի վրա՝ օգտագործելով մազխուզիչի ամենամեծ կցորդը: Կտրվածքն սկսում են գլխի գագաթից՝ իջնելով դեպի քունքերը:

Մազերը սանրում են աճման ուղղությամբ, իսկ մեքենան մազերի մեջ է մտնում դրանց աճմանը հակառակ: Գործիքը սեղմելով գլխի մակերեսին՝ կատարում են բազմաթիվ շարժումներ, սակայն չփոխելով գործիքի թեքության անկյունը գլխի նկատմամբ:

Գործիքը մազերի միջով անցկացնելով՝ հարկավոր է դրանք շատ սանրել՝ սանրվածքն ավելի կոկիկ և որակյալ դարձնելու նպատակով:Այնուհետև կտրում են ծոծրակի հատվածի մազերը: Այդ նպատակով օգտագործում են մոտավորապես երկու անգամ փոքր կցորդ: Այսինքն՝եթե գլ- խի գագաթի մազերը կտրվել են 12 մմ -անոց կցորդով, ապա ծոծրակի մազերը՝ 6 մմ կամ9 մմ-անոցով:

Կտրվածքն սկսում են ներքևից՝ մեքենան շարժելով դեպի վերև, ընդորում, եթե սկզբում մեքենան ամուր սեղմված է գլխին, ապա հասնելով գլխի գագաթին՝ այն հեռանում է գլխի մակերեսից՝հավասարեցնելով մազերի երկարության տար- բերությունը:

Օգտագործելով նույն կցորդը՝ կտրում են նաև քունքի հատվածի մազերը՝ սանրելով դրանք տարբեր ուղղություններով:Այս փուլում կատարվում է սանրվածքի ամենադժվար աշխատանքը,այն է՝ կցորդը հանելով, կատարվում է սահուն անցում գլխի գագաթային հատվածից դեպի գրոյական վիճակ: Մազխուզիչով կատարում են սահուն անցում եզրագծով կտրման կարճ մազերից դեպի նոր կտրված մազերը:

Կատարում են եզրագծով կտրում մեքենայով՝ առանց կցորդի, քունքերի հատվածում, ականջների հետևում, պարանոցի հատվածում:

Սովորական մկրատի օգնությամբ գլխի ողջ մակերեսով կատարում ենմազերի երկարության ստուգիչ աշխատանքներ:

Սանրի վրա ֆիլիրովային մկրատով հեռացնում են սանրվածքի բոլոր անճշտություններն ու անհավասարությունները:



*Գլ խի գագաթի կտրվածքը սկսում են դեմքի հատ- վածից՝ օգտագործելով ամենամե ծ կցորդը:*



*Ծոծրակի եզրագծով կտրումը կատարվում է մեքենայով՝ առանց կցորդի:*

*Ծոծրակի և քունքային հատվածների կտրվածքը կատարվում է ավելի փոքր կցորդով:*

**Տղամարդու կարճ սանրվածք՝** « սանրի վրա» հնարով

**Մազի տեսակը՝** խիտ, միջին հաստության:

**Անհրաժեշտ գործիքները՝** ուղիղ մկրատ, սանր:

Կախված մազերի խտությունից՝ այս սանրվածքը կարելի է կատարել չոր և խոնավ մազերի վրա: Չոր մազերով կտրում իրականացնելը շատ ավելի հարմար է, սակայն հարկ է նշել, որ չոր մազերը բթացնում են մկրատը և դժվարացնում սահուն անցումների կատարումը: Եթե մազերը բավականին խիտ են, ապա մազերի կտրվածքը պետք է սկսել չոր կամ թեթևակի խոնավ մազերի վրա, իսկ կտրվածքի վերջում մազերը թացացնել և կատարել ստուգիչ աշխատանքներ:
« Սանրի վրա» տղամարդու սանրվածքի կատարումն սկսվում է մազերն իրենց աճման ուղղությամբ խնամքով սանրելով:
Սանրի վրա կտրում են գլխի գագաթի հատվածի մազերը՝ շարժվելով դեմքի հատվածից դեպի ծոծրակային հատվածը: Սանրը ներս ենք տանում մազերի մեջ՝ դրանց աճմանը հակառակ, և մազերը կտրում հենց սանրի վրա:



Ծոծրակի հատվածի մազերը կտրում են՝ սկսելով ներքևից դեպի վերև: Որպեսզի չստացվի աստիճանանման անհարթություն,մազերը սանրում են որոշակի անկյան տակ և կատարում են ստուգիչ կտրվածք՝ հեռացնելով սանրից դուրս ցցված բոլոր ավելորդ մազերը:

*Գլ խի գա գա թի մա զե րը սկ-*
*սում ենք կտ րել դեմ քից դե պի ծոծ րակ:*

Ստուգիչ կտրվածքը ծոծրակի վրա ավելի հարմար է կատարել խաչաձև ուղղությամբ: Դրա համար սկզբում սկսում են աշխատանքները եզրակտրման ձախ կողմից դեպի աջ ականջը՝ անկյան տակ, իսկ հետո հակառակ կողմից՝ աջից դեպի ձախ ականջը: Կտրել պետք է միայն ցցված մազերը:



*Ծոծրակի հատվածը կտրում ենք ներքևից դեպի վերև:*



*Քունքային հատվածի մազերի կտրումը:*

*Ստեղծում ենք եզրակտրման ուրվագիծը:*

Այնուհետև անցնում են քունքային հատվածի կտրմանը՝ ներքևից դեպի վերև՝սկսած դեմքի հատվածից:

Քունքի և գագաթի միջև ընկած հատվածը ստուգում են ներքևից դեպի վերև, ինչպես քունքային հատվածի կտրման ժամանակ, և սկսած դեմքից՝գագաթի հատվածի մազերի կտրման ժամանակ:

Ստեղծվում է եզրակտրման ուրվագիծը:Քունքերի հատվածներն ուղիղ են: Հեռացվում են ականջի հետևում ցցված բոլոր մազերը: Ծոծրակի եզրագիծը սահուն է, իսկ անկյունները թեթևակի կլորացած:Եզրագծից դուրս մնացած բոլոր մազերն անհրաժեշտ է հեռացնել ածելիով կամ մկրատի ծայրով: Այս սանրվածքի եզրակտրման համար կողմնորոշիչ կարող է լինել մազերի բնական աճը:

Վերջնական աշխատանքները կատարվում են փիլիրովային մկրատով:

**Տղամարդկանց դասական սանրվածք**

**Մազի տեսակը՝** ցանկացած:

**Անհրաժեշտ գործիքները՝** ուղիղ մկրատ, սանր:

Նախքան տղամարդկանց դասական սանրվածքի կտրման տեխնոլոգիային անցնելը, անհրաժեշտ է մաքուր, խոնավ մազերը բաժանել բաժուկների:

Կտրվածքն սկսում են աջ քունքային բաժուկից:Մազերի աճման եզրագծին զուգահեռ, անկյունագծային բաժուկով առանձնացնում են մազափունջը: Այն սկզբում սանրում են



*Անկյունագծային բաժուկով առանձնացնում են մազափունջը,սանրում դեպի դեմքը և կատարում քունքային հատվածի եզրակտրում:*

*Հորիզոնական բաժուկով առանձնացնում են քունքի մազափունջը և կտրում ուղիղ կտրվածքով:*

*Կողմնորոշիչ մազափունջը վերևի ծոծրակային հատվածի համար կլինի քունքային հատվածի նոր կտրած մազափունջը:*

դեպի դեմքը և կտրում՝ քունքի անկյունը դեպի դեմքը, ապա սանրում հերքև և կատարում քունքային եզրագծով կտրում: Քունքային եզրագիծը պետք է լինի ուղիղ:

Հորիզոնական բաժուկով առանձնացնում են քունքային հատվածի մազափունջը, ձգում են 90°անկյան տակ և կտրում ուղիղ կտրվածքով:Այսպես՝ մազափունջ առ մազափունջ, առանձնացնելով հորիզոնական բաժուկներով,կտրում են քունքային հատվածի բոլոր մազերը՝ սկզբում աջ կողմինը, հետո՝ ձախ:Այնուհետև կտրում են սկզբում ծոծրակային վերևի, հետո հերքևի հատվածի մազերը՝ « մազերը մատների վրահանելու» մեթոդով: Կողմնորոշիչ մազափունջը կլինի մինչ այդ քունքային հատվածում կտրած մազափունջը: Ծոծրակային հատվածը կտրում են աջից դեպի ձախ, մի ականջից դեպի մյուսը, այնպես, որ յուրաքանչյուր հաջորդ մազափունջը գլխի նկատմամբ ուղղահայաց լինի և հավասար լինի նախորդին:Ծոծրակային հերքևի հատվածը նույնպես կտրում են ուղղահայաց բաժուկ հերով, ձգում 90° անկյան տակ և մազափունջը կտրում 45° անկյան տակ: Կատարում են ծոծրակի հերքևի հատվածի և ականջների հետևի եզրակտրումները:



*Տղա մար դու դա սա կան*

*սա նր ված քի հա մա չա-*

*փու թյան ստու գիչ աշ խա-*

*տա նք նե րը՝ դի մա ցից:*

**Տղամարդու սանրվածք՝ ուղիղ կտրվածքով**

**Մազի տեսա կը՝** խիտ, ոչ շատ կոշտ:

**Անհ բաժեստ գործիքները՝** սանր, ուղիղ և ֆիլիրովային մկրատներ:

**Սանրվածքի կատարման տեխնոլոգիան**

Գլխի մազերը բաժանում են հատվածների: Դրա համար ձևավորում են բաժուկ, որը սկսվում է մի ականջից մինչև մյուս ականջը՝ անցնելով գլխի գագաթով: Բացել բաժուկներ սկսած դեմքից՝ ճակատային փոսիկներից մինչև նոր ստացած բաժուկը: Ծոծրակային մասում պետք է ստացվի չորս հատված. երկուական՝ քունքային և գագաթային: Հարմարավետության համար մազերը կարելի է ֆիքսել մազակալով:Ծոծրակային հատվածի կենտրոնում առանձնացնում են մազափունջը և մատները թեթևակի բացելով՝

կատարում ուղղաձիգ կտրվածք:Այնուհետև անցնում են քունքի կողմնային հատվածի կտրմանը: Կողմնորոշվելով ծոծրակի մազափնջի երկարությամբ՝ կտրում են մազերը՝ պահպանելով անփոփոխ ձգման նույն անկյունը:Քունքային հատվածի կտրվածքն սկսում են այն բաժուկից, որն առանձնացնում է ծոծրակային հատվածը քունքից: Վերցնում են ստուգիչ մազափունջը և մյուս մազափնջերը կտրում՝ կողմնորոշվելով այդ մազափնջով: Ձգելով մազափունջը 90°անկյան տակ՝ սանրում են քունքի մազափնջի հետ միասին: Կտրում են մազերը՝ պահպանելով երկարությունը և անկյունը:Շարժվում են դեպի դեմքը՝ սկզբում մի կողմից, ապա՝ նաև մյուս:Քունքային հատվածը կտրում են « մազափունջը մազափնջի հետևից» մեթոդով:Գագաթային հատվածը կտրում են ուղիղ կտրվածքով, միանգամից, մի մազափնջի տեսքով: Դա մազերը դարձնում է առավել առաձգական:Մազերը սանրում են գագաթից՝ աճման ուղղությամբ՝ որոշելով կտրվածքի պարագիծը,կատարում են եզրակտրում:Սանրվածքը բավականին երկար է,այդ իսկ պատճառով եզրակտրումը խիստ է ստացվում: Մազերը սանրում են դեպի դեմքը և կատարում ճակատային մազափնջի եզրակտրումը:Մազերը չորացնում են մատների վրա: Ֆիլիրովկան կատարում են « պոյնտինգ» մեթոդով:

*Մազերը բաժանում են հատվածների:*

*Ծոծրակը կտրում են ուղղահայաց բաժուկով՝ հաշվի առնելով համապատասխան անկյունը:*

*Քունքային հատվածը կտրվում են՝ կողմնորոշվելով այն մազափնջով, որը գտնվում է ծոծրակային հատվածի սահմանուն:*

*Կատարում են սանրվածքի եզրագծով կտրում:*



*Գագաթի հատվածի մազերը կտրում են միանգամից:*

*Մազերը չերացնում են և կտրում «պոյտինգ» մեթոդով:*

**Հարցեր**

Թվարկել տղամարդկանց մազերի տեսակները:----------

Ներկայացնել մազերի կտրման հաջորդականությունը:----------

Ի՞նչ է նշանակում« տուշովկա»:----------

Ի՞նչ է նշանակում «մազերի զրոյական վիճակ»:----------

Ինչպե՞ս է կատարվում մազերի արտաքին կտրումը:----------

Ինչպե՞ս է կատարվում մազերի ներքին կտրումը:----------

Ինչպե՞ս է կատարվում«պոյնտինգ» :----------

Ի՞նչ է նշանակում« ստուգիչ մազափունջ» արտահայտությունը:----------

**Թեմա2.2 Բեղերի, մորուքի կտրում և ձևավորում**

Տղամարդու բեղերը և մորուքը ոչ միայն զարդարում են նրան, այլ նաև թաքցնում են այնպիսի թերություններ, ինչպիսիք են փոքր ծնոտը, լայն այտերը, երկար կամ փոված քիթը, խոշոր շրթունքները և այլն:Մորուքի և բեղերի մազերը ավելի կոպիտ են, քան գլխի մազերը: Երբեմն մորուքի և բեղերի մազերն աճում են անհամաչափ: Դրանք կարող են ունենալ նաև տարբեր գույն կամ երանգ: Տարբեր է լինում նաև բեղերի և մորուքի մազերի խտության աստիճանը: Այս ամենը պետք է հաշվի առնել՝ մորուքի և բեղերի ձևի և չափի ընտրության ժամանակ:Մորուքի ձևի ընտրությունը խիստ անհատական է: Այն կարող է լինել ձվաձև, սեպանման, լայն, նեղ,սեղանաձև բահանման,«Ժաբո»/«жабо»/:Մորուքը կտրելու ժամանակ պետք է հաշվի առնել մազերի գույնը: Եթե մազերը մուգ գույն ունեն,իսկ մաշկը բաց գույն, ապա կարիք չկա, որ մորուքը լինի ծավալուն: Այտի մազերն անհրաժեշտ է սափրել, որպեսզի դրանք կտրուկ չարտահայտվեն դեմքի վրա:Բաց և շիկահեր մազերի դեպքում, մորուքը կարող է լայն լինել, քանի որ այն այնքան էլ կտրուկ չի առանձնանում դեմքի վրա:Մորուքի ձևի և չափի վրա մեծ ազդեցություն ունի մարդու հասակը, ուստի ցածրահասակ մարդուն հարմար է փոքր չափերի մորուք՝ « կառե», « ժաբո»,«էսպանոլկա»/«эспаньолка»/:Միջին հասակի մարդիկ մորուք և բեղերի չափաձևի ընտրության հարցում ազատ են: Իսկ բարձրահասակ տղամարդկանց ավելի բնորոշ է ծավալուն մորուքը, որը մեծացնում է դեմքի չափերը և մարմնի չափերը դարձնում համաչափ:Այտերի վրա աճող մազերը կարելի է սափրել կամ թողնել:Նախքան մորուքի կտրելը՝ այն անհրաժեշտ է խնամքով սանրել՝ ձախ ձեռքը դնելով մորուքի տակ: Այնուհետև կտրել կողքի հատվածները՝ մկրատը բռնելով ծայրերով դեպի վերև:Հասցնելով մորուքի ծայրը զրոյական վիճակի՝

պետք է հետևել, որ սուր ծայրը համընկնի ծնոտի կենտրոնի հետ:Դրանից հետո կատարվում է նախ ծնոտի վերևի, ականջների մոտի մազերի տուշովկա, ապա՝ ամբողջ մորուքի հղկում:

*Մորուքը սանրում են՝բռնելով այն ձախ ձեռքով:*

*Մորուքի կողքերի կտրումը:*

*Քունքային հատված-*

*ների /бакенбарды/*

*« տուշովկան» սանրի*

*վրա:*

Եթե այտերը պետք է սափրված լինեն, ապա աշխատանքներն սկսում են հենց այտերի սափրումից:Այնուհետև սափրում պարանոցը մինչև մորուքի սկզբի եզրագիծը: Հետո կտրում են բեղերը՝ հեռացնելով ներքևի շուրթի տակի մազերը և սկսում են մորուքի ձևավորումը սանրի վրա: Մորուքի շեղ կողմերը պետք է հնարավորինս նուրբ տուշովկայի ենթարկել:

*Քունքային հատվածի մազերը կարելի է կտրել մազխուզիչով*

**Մորուքների տեսակները**

**Անգլիական /շկիպե բյան/ /шкиперская/**

Այս տեսակի մորուքը հաճախ գերադասում են այն տղամարդիկ, ովքեր որևէ կապ ունեն ծովի հետ և ցանկանում են ընդգծել այդ կապը:

**«Իսպանական»**

Զուգորդվում է առնական, ինտելիգենտ տղամարդու կերպարի հետ: Այտի մազերը հեռացվում են կամ պարզապես սափրվում: Այնուհետև մշակվում է անցումը, ընդորում շատ կարևոր է, որ մորուքի աջ և ձախ կողմերը համաչափ լինեն:

**Ձվաձև**

Սկզբում կտրվում են պարանոցի և այտերի մազերը: Այնուհետև, կանգնելով հաճախորդի աջ կողմում, կտրում են մորուքի աջ կողմը, քունքային հատվածում սահուն անցնելով գրոյական վիճակի: Նույն կերպ ձևավորվում է մորուքի ձախ կողմը: Դրանից հետո մշակվում և հղկվում է մորուքի եզրագիծը:

**Երկար « կառե»**

Կտրվում է ռուսական մորուքի նման: Այտի մազերը հեռացվում են և ենթարկվում տուշովկայի: Իսկ բեղերը հստակ գծով առանձնացվում են մորուքից: Կարճ « կառեն» պահանջում է չափազանց խնամքով աշխատանք:

Աջ և ձախ կողմերից մազերը կտրվում են շեղ գծով, ականջի ներքևի հատվածից դեպի բեղերը, պարանոցի և այտերի վերևի մասերը մաքրվում են ածելիով: Բոլոր եզրագծերը խնամքով ենթարկվում են տուշովկայի և հղկվում:

**Ռուսական մորուք**

Նախքան աշխատանքների սկիզբը՝ առաջնահերթ կտրում են մորուքի հիմքը: Այտերը չեն մաքրում, մազերի ծայրերը մնում են բնական տեսքով:Այտերի մազերի եզրագիծը չի առանձնանում մորուքից, այլ նրա հետ կազմում է մի ընդհանուր զանգված: Բեղերն առանձնացվում են մորուքից: Այդ նպատակով բերանի անկյունների և շրթունքի ներքևի մազերը կտրվում են մկրատի ծայրերով:

**Կոնաձև մորուք**

Կոնաձև մորուքին բնորոշ են սուր ծայրը և ուղիղ կողմերը: Ոչ մի դեպքում այն չի կարող ունենալ կորաձև հատվածներ: Այտերի մազերը կարող են հեռացվել կամ ցանկության դեպքում մնալ:

*Բա հան ման մո րուք:*

*Սեպաձև մորուք:*

*Շկիպերյան /шкиперская/ մորուք:*

*« Ժա բո» /«жабо»/:*

*Ռու սա կան նեղ մո րուք:*

*Կարող է լինել կարճ կամ միջին:*

*Ռուսական լայն, հաճախ էլ՝*

*բահանման մորուք:*

*Ֆրանսիական սուր մորուք:*

*Ֆրանսիական լայն մորուք:*

**Մորուքը** հնարավորություն է տալիս շտկելու տղամարդկանց դեմքի որոշ թերություններ:

**Կլոր դեմքը** շտկման է ենթարկվում գլխի գագաթային հատվածում՝ստեղծելով ծավալային սանրվածք: Եվ երկարավուն մորուքով՝ֆունֆից մինչև մյուս ֆունֆը: Բեղերն այս դեպքում պետք է լինեն միջին չափի՝ ներքև ուղղված ծայրերով:

**Եռան կյունաձև դեմքին** հարմար է կլորավուն մորուք՝ պայտանման, ֆառակուսու տեսքով: Դա նեղ ծնոտին հաղորդում է խոշոր տեսք:

**Երկարավուն դեմքին** հարմար է լայն մորուք՝ ձվաձև, պայտանման,սեղանաձև: Նման դեմքին հարմար չէ «էսպանոլկա» կամ կոնաձև մորուքը, քանի որ դրանք դեմքն ավելի երկարացնելու հատկություն ունեն:

**Սեղանաձև դեմքը** կարիք ունի վիզուալ նեղացման, որը հնարավոր է « ժաբո», «շկիպերսկայա», « կառե» տեսակի մորուքներով:

**Բեղերի և ֆունֆային երկար մազափնջերի /բակենբարդների/ կտրում**

Բեղերի ձևի ընտրությունը կախված է դիմագծերի, քթի և շրթունքի չափերից:

**Երկար բեղեր**

Դրանց հաճախ անվանում են ուկրաինական. ունենում են նեղ ծայրեր, որոնք ձևավորվում են ածելիով՝ « ֆիլիբովկա» մեթոդի միջոցով:Եթե բեղերը փարթամ են, ապա կարելի է ֆիլիբովկայի ենթարկել մի շերտ մազափունջ: Որպեսզի բեղերի երկարությունը կարճացվի, այն հարկավոր է պարզապես կտրել՝ սանրելով ծայրերից դեպի արմատները:

**Կարճ կամ անգլիական բեղեր**

Բեղերը կտրվում են բնական աճին հակառակ: Այնուհետև կատարվում է դրանց ձևավորումը:Բեղերը կտրելու ժամանակ պետք է մկրատը բացել զգուշությամբ, որպեսզի շրթունքի վերևի մաշկը չվնասվի:

**Ձևավոր բեղեր**

Սկզբում կտրվում են բեղերը, ապա ածելիի ծայրով մաքրվում բեղերի մեջտեղի փոսիկը: Որպեսզի բեղերը ստացվեն ձևավոր, անհրաժեշտ է դրանց ծայրերը ածելիով թեթևակի սափրել:

**Քունքային երկար մազափունջ /բակենբարդներ/**

Բակենբարդները պետք է ունենան խիստ հստակ որոշակի ձև: Որպեսզի բակենբարդների մազերը չանցնեն մաշկի այն սահմանը, որտեղ մազեր չեն աճում, դրանց ներքևի և կողքի ծայրերը խնամքով եզրակտրում են:

Քունքի և բակենբարդների մազերի երկարությունը պետք է լինեն հավասար և կազմեն ընդհանուր զանգված:Բակենբարդների կտրումը կատարվում են մկրատով և մազխուզիչով:

**Բեղերի տեսակներն ու ձևերը**

**Կիսակլոր,** փարթամ բեղեր: **Ծավալուն** բեղեր:

**Էլեգան**

**Ռոմանտիկ** բեղեր: ***Արծվաթև*** բեղեր: ***Էլեգանտ*** բեղեր:

**Գործարար,** ինտելի-գենտ մարդու բեղեր:

**Զինվորականի** բեղեր:

**Բելոռուսական** բեղեր:

**Կորաձև** բեղեր:

**Հարցեր**

Բեղերի և մորուքների տեսակները:----------

Ինչպե՞ս է ընտրվում բեղերի և մորուքի մոդելավորումը:----------

Ներկայացնել բեղերի և մորուքի ձևավորման և կտրման հաջորդականությունը:----------

**Թեմա2.3Կտրման գործողությունների հաջորդականության պահպանում:**

**Գործնական աշխատանք**

Նախապատրաստել մազերը կտրման:

Ընտրել մազերը կտրելու գործիքները:

Կատարել մազերի կտրում:

Նախապատրաստել մորուքը ձևավորման:

Կատարել մորուքի և բեղերի ձևավորում:

**Թեմա2.4Աշխատանքի ավարտական գործողություններ:**

**Գործնական աշխատանք**

Կատարել մազերի կտրման աշխատանքների ավարտական գործողությունները,

Կատարել բեղերի և մորուքի ձևավորման ավարտական գործողությունները: